վիեննայի Մխիթարեանց կ. Պոլսոյ Վանատան մատենադարանի "Գիրք օրինակաց" (տպ. 1750) մատենին սկիզբը կայ ստորագրեալ՝ "Սարգիս վրդ. Պաղտասարեան Թէքէրճէնցի", որ անտարակոյս նոյն անձն է։

Սարգիս վ. Թէքիրտաղցւոյ վիճակակից եղաւ նաեւ Սահակ քահանայ, ծնած Ախալցխա 28 Յունիս 1753, որդի Խաչատուր քահանայի։ Ասիկայ այնչափ նշանաւոր էր հմտութեամբն ու քարոզութեամբը, որ Ղուկաս կաթուղիկոս զինքը Ախալցխայի նուիրակ անուանած էր, որ անսովոր բան էր ամուսնացեալ քահանայի համար, եւ իրեն համար կ'ըսէին՝ թէ եւ ոչ իսկ Թիֆլիսի առաջնորդն Հ։ Մարտիրոս Եպ. կրնար անոր հետ վիճաբանիլ։ Այս Մարտիրոս Եպ. 1769ին Սիմէոն կաթողիկոսին կողմանէ Ախալցխայի նուիրակ ղրկուած էր յատուկ ֆէրմանով Բարձրագոյն Դրան, որպէս զի այնտեղ կաթողիկէներն հալածէ։ Մարտիրոս եկաւ տիրացաւ երեք եկեղեցիներուն երեք տարի, քափուչին կրօնաւորները բերդ մ'աքսորել տուաւ, իսկ չորս հայազգի եկեղեցականները՝ այն է պօղոս վ. Լեւոնեան, Արքեպ. Ախալցխայի, Տէր Յովհ. Ճիկոնեան (Gigonanti), երկուքն ալ Հռոմայ Պապրատան աշակերտ, Տեփ. վ. Աւթանտիլեան, փոխանորդ Լեւոնեանի, եւ Տէր Յակոբ, կապանք էջմիածին ղրկեց, ուր երեք տարի բանտ եւ խոշտանգանք կրեցէն եւեւ ազատեցան չորսն ալ, Լեւոնեան եւ Աւթանտիլեան Հռոմ գացին, ուր Լեւոնեան ձեռնադրիչ